Բեգոզլու թաղամասի տպարանի 1699 թ. հրատարակություններից հայտնի են երկուսը.

«Տօմարաց գիրք Հայոց, Հռոմայեցւոց եւ պարզատօմար, ընդ որոց եւ տաղ Յովասափու... Ի մայրաքաղաքն Կոստանդնուպոլիս, ի թուականիս Հայոց ՌՃԽԸ»:

«Վարդապետութիւն քրիստոնեական... Ռոպերթոսի Պելլարմինոսի»:

1700—1702 թվականներին այստեղ տպագրվել են.

«Գիրք մեկնութեան Յայտնութեանն սրբոյ Յօհաննու աւետարանչի: ...Տպագրեցեալ ներ տպարանում սրբոյ էջմիածնի և սրբոյ Սարգսի զօրավարի: ...Ի Կոստանդինուպոլիս քաղաքի: Եւ թուաբերութեան Հայոց ՌՃՄ, և Ը-ին յունվարի ամսոյն: Եւ ի թվին փրկչին 1700 յունվարի Ը»:

«Համառօտ մեկնութիւն երգոյ երգոցն Սողոմոնի: Շարադրեցեալ ի Խաչատրոյ Էրզրումեցոյ... Ի Կոստանդնուպոլիս քաղաքի: Եւ թուաբերութեան հայոց ՌՃՄ յունվարի ամսոյն Ը: Եւ ի թվին փրկչին 1700, յունվարի Ը»:

«Գիրք Թոմայի Գնմբեցւոյ, Կանոնիկոսի կրօնաւորի ի կարգէ սրբոյն Օգոստինոսի, Յաղագս նամանեսութեանն Քրիստոսի: ...Եւ տպագրեցեալ ի Կոստանդինուպոլիս... Ի թուաբերութեան Հայոց ՌՃԽ և Թ-ին, նոյեմբերի ամսոյն»:

«Գիրք յաղագս նորեկ տղայոց և մանկանց անկրթից, ...Ներտպարանում սրբոյն էջմիածնի և սրբոյն Սարգսի զօրավարի, 1700»:

Ըստ Ղազիկյանի՝ «Նոյն ճակատով (անվանաթերթով—Հ. Դ.), թուականով և դիրքով ուրիշ տպագրութիւն մըն ալ կա ի Կ. Պոլիս»[18]:

«Թէոփիլոս, այսինքն խօսակցութիւն Թէոփիլոսի ընդ վարդապետին յաղագս ճշմարտութեան և չերմեռանդութեան: ...Ի Ալիկօռնայ քաղաքի: Յամի տեառն 1701, յունվարի...»:

«Գիրք մտածական աղօթից, բանալի չերմեռանդակերտ... Տպագրեցեալ ի Կոստանդնուպոլիս, ի թուին Քրիստոսի, 1701, իսկ ըստ Հայոց ՌՃՄ-ին ի մայիսի ամսոյ ԻԸ-ին»:

«Տաղարան վայելուչ և գեղեցիկ ի գանազանից բանաստեղծից... Ի սուրբ էջմիածին Երեմիա վարդապետ: ...Եւ տպագրեցեալ ի Կոստանդնուպոլիս, ի թուին Քրիստոսի 1701, իսկ ըստ Հայոց ՌՃՄ-ին ի մայիսի ամսոյ ԻԸ-ին»:

«Խոստովանաբան կամ Ամբաստանաբան... Եւ տպագրեցեալ ի Կոստանդինուպոլիս. ի թուին Քրիստոսի 1701, իսկ ըստ Հայոց ՌՃՄ-ին, ի մայիսի ամսոյ ԻԸ-ին»[19].

«Գործիք շարաբանաց փրկչին»: *61 էջանոց այս գրքույկից մեկ օրինակ պահվում է Վենետիկի Մխիթարյան մատենադարանում, մեկ օրինակ էլ՝ Երևանի գրականության և արվեստի թանգարանում: Երկու օրինակներն էլ անվանաթերթ կամ հիշատակարան չունեն:*

«Յիսուս որդի անուն տեառն Նեսէսի Հայոց կաթողիկոսի ասացեալ բան մխիթարութեան... Յամի տեառն 1702 յունվար 8...»:

«Գիրք հայելի վարուց, որ ասի Հարանց վարք: Տպագրեցեալ... Ի թվին Քրիստոսի 1702: Իսկ ըստ Հայոց ՌՃՄԱ, մայիսի ամսոյ ԻԱ-ին...»:

«Մեկնութիւն ներողութեանց, որք շնորհին յեկեղեցոյ ի ձեռն սրբազանի փափին: ...Յամի տեառն 1702»:

1703 թ. այս տպարանից որևէ հրատարակություն հայտնի չէ: Հաջորդ տարվա թվագրությամբ և Կ. Պոլսի անունով հանդիպում ենք երեք գրքերի, որոնցից առաջին երկուսը Սարգիս Սահեթճու հրատարակություններն են:

«Գիրք որ անուանեալ կոչի Լուսաշաւիղ արարեալ և սահմանեալ Դալբստի վարդապետի Ամասեացոյ: ...Եւ ի յամի փրկչին ՌԷՃԴ-ին եւ Հայոց ՌՃՄԴ: Ի մայրաքաղաքն Կոստանդնուպոլիս»:

«Գիրք Բուրատան աղօթից... Թարգմանեցեալ ի լատինացւոց լեզուէ ի հայկական բարբառ, աշխատասիրութեամբ ուրումն Ստեփաննոսի վարդապետի Լենացւոյ... յամի փրկչին ՌԷՃԴ-ին, եւ Հայոց ՌՃՄԴ: Ի մայրաքաղաքն Կոստանդնուպոլիս»:

«Ոտանաւորք բանք ի գործս առաքելոց, շարադրեցեալ ի վերապատուելոյ քահանայէ տէր Կոմիտասէ Կոստանդինուպոլսեցւոյ... Տպագրեցեալ ի Կոստանդինուպոլիս, ներ տպարանում

---

18 *Ա. Ղազիկեան, Հայկական նոր մատենագիտութիւն, հատ. 1, էջ 132:*

19 *Ուշագրավ է, որ վերջին երեք գրքերն էլ հրատարակության միևնույն տարեթիվն ու ամսաթիվն ունեն՝ «ի թուին Քրիստոսի 1701, իսկ ըստ Հայոց ՌՃՄ-ին, ի մայիսի ամսոյ ԻԸ-ին»: Միևնույն տարեթիվն ու ամսաթիվն ունեն նաև 1698-ին տպագրված գրքերից երկուսը՝ «Գիրք աշխարհաց»-ն ու Երեմիայի «Բառգիրք»-ը և 1700-ի «Գիրք մեկնութեան յայտնութեանն» ու «Համառօտ մեկնութիւն երգոյ երգոցն»: Արդյոք միևնույն օրն են սկսել տպագրվել, թե՞ հրատարակիչները նույն ամսաթվերն են գրել այլ նկատառումներով:*